



Հովհաննես Հովհաննիսյան

Հատիկ

Լույսը բացվում է. շուտ արտը գրնամ.
Պատռեմ սուր խոփով ես կուրծքը հողի.
Իմ սիրո՛ւն հատիկ, քեզ նորան պահ տամ
Մինչև օրերը ամռան արևի:

Թաղեմ քեզ, հատի՛կ, և դարդրս քեզ հետ.
Թե աստված ուզեց, դու կանաչեցիր,
Թող դարդրս մեռնի գետնի տակ անհետ,
Դու ինձ մխիթար կրկին տուն դարձի՛ր:

Եվ ջերմ աղոթքով տիրամոր առջև
Ես մոմ կրվառեմ, ես խունկ կրծրխեմ,
Որ քեզ պարզևե մի առատ անձրև,
Որ քեզ միշտ սիրով նայե խնդաղեմ:

Բայց թե այդ շնորհին մեղքերիս համար
Արժանի չլինիմ, ծով կըդարձնեմ
Ես տաք քրտինքը ճակտիս արևառ,
Որ քեզ, իմ հատի՛կ, ծարավ չըթողնեմ:

Ծըլի՛ր, կանաչի՛ր, ոսկե սավանով
Ծածկի՛ր իմ արտը ողջ պեծածան,
Նոր այն ժամանակ անուշ շրշյունով

Տո՛ւր ջարդված սրտիս մի քուն հանգստյան: